

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար Յ.Գ.Նավասարդյան

2013թվականի հունվարի 17-ին Արմավիրի մարզի Շահումյան համայնքում տեղի ունեցավ ժողով մասնակցությամբ՝ մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության ՏԻՄ-ի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ պարոն Գ.Հովհաննիսյանի, Շահումյան համայնքի ավագանիներ Ս.Պողոսյանի, Կ.Եղիազարյանի, Ա.Հարությունյանի, Բ. Սադոյանի և համայնքի բնակիչների:

Հարգելի պարոն Գ.Հովհաննիսյան, ավագանիներ և Շահումյանի բնակիչներ, թույլ տվեք ձեզ ներկայացնել 2012 թվականի ընթացքում իմ կողմից կատարված աշխատանքները:

Շահումյանի գյուղական համայնքի ավագանին բաղկացած է 7 անդամից, որոնք իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված իրավասությունները:

Իմ կողմից իրավիճակի և վարվել է ավագանու 9 նիստ, որից 3 արտահերթ, 6 հերթական՝ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:

Իմ հանձնարարությամբ Շահումյանի գյուղապետարանի Աշխատակազմի քարտուղար Գ.Համբարձումյանը, պահպանելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, ժամանակին ապահովել է համայնքի ավագանու որոշումների առաքումը մարզպետարան:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպությունները ստացված գրություններին պատասխանվել է ժամանակին և ապահովվել է այդ գրություններում նշված պահանջների կատարումը:

2012 թվականի բյուջեի եկամուտները կազմել է 26671.8 հազ. դրամ, որի հիման վրա էլ մեր կողմից իրականացվել է պետության կողմից պատվիրակված և համայնքի ղեկավարի կամավոր լիազորություններ:

Ըստ ոլորտների կատարվել են հետևյալ աշխատանքները.

- տեղական հարկերի գծով՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումը, ինչպես նաև կազմակերպվել է տեղական տուրքերի և վճարների համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն համարվող հողերի, գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը,
- հողի հարկ՝ 5607.2 հազ. դրամ՝ 5680.0 հազ. դրամի դիմաց, կատարողականը 98.7 %,
- վարձակալական վճարը կազմել է 34.3 հազար դրամ՝ 33.0 հազ. դրամի դիմաց, կատարողականը՝ 103.9 %,
- գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 1403.5 հազ. դրամ՝ 1050.0 հազ. դրամի դիմաց, կատարողականը 138.4 %,
- գույքահարկ շենք-շինությունների համար 143.7 հազ. դրամ՝ 300.0 հազ. դրամի դիմաց, կատարողականը 48%:
- Տեղական տուրքեր, ընդամենը 256.0 հազ դրամ 237.0 հազ դրամի դիմաց, կատարողականը 108 %, այդ թվում՝

1. ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվության համար գանձվել է 66.0 հազ. դրամ, 72.0 հազ. դրամի դիմաց, կատարողականը 91.6 %,
2. հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար 150.0 հազ դրամ 150.0 հազ. դրամի դիմաց , կատարողականը 100%,
3. մարդատար տաքսու ծառայության իրականացման համար 10.0 հազ. դրամ, 15.0 հազ. դրամի դիմաց, կատարողականը 66.6% ,
4. հիմնական շինության թույլտվության համար գանձվել է 30.0 հազ. դրամ:

Բյուջեի կատարողականը 2012 թվականի համար կազմել է 102 %:

Համայնքի բնակիչներին տրվել է փաստաթղթեր, որոնք հիմնականում վերաբերվել են ժառանգություն ձևակերպելուն՝ նոտարական գրասենյակ ներկայացնելու համար:

Հասարակական կարգի պահպանության բնագավառում ոստիկանության կողմից տրաված տեղեկատվության հիման վրա նախագգուշացվել է 3 մարդ, հիմնականում ՎԻՎՕ – ի 191-րդ հոդվածի խախտումներով :

Գյուղապետարանը մշտական ուշադրության կենտրոնում է պահում համայնքի գինապարտ քաղաքացիների հաշվառումը, աջակցում ենք զորակոչին, զինվորական կոմիսարիատի կողմից ուղարկված գրություններին տրվում է սպառիչ պատասխան:

Իմ հանձնարարությամբ գյուղապետարանը կազմակերպել է ցանքատարածությունների հաշվառումը ըստ կուլտուրաների և յուրաքանչյուր ամիս ներկայացվել է հաշվետվություն վիճակագրական վարչություն : Կազմակերպվել է անասնազխաքանակի հաշվառում, ժամանակին կատարվել է հակահամաճարակային պատվաստումներ:

Գյուղապետարանը առանձնակի ուշադրություն է դարձրել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարեփոխմանը: Համայնքի անապահով ընտանիքներին տրվել է դրամաման օգնություն:

Համայնքում մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդական ծրագրերին որպես ավանդույթ այս տարի առաջին կիսամյակում նշեցինք Տեառնընդառաջի , Մայրության և գեղեցկության տոնակատարությունները :

Ուշադրության կենտրոնում է եղել Շահումյան համայնքի միջնակարգ դպրոցը, հնարավորության սահմաններում աջակցություն են ցուցաբերել:

Ամանորի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, համայնքի 0-6 տարեկան երեխաների համար հրավիրվել է Ձմեռ պապ և բաժանվել նվերներ: Զարդարվել և ամբողջովին լուսավորվել է եկեղեցի տանող ճանապարհը:

Իմ նախաձեռնությամբ և միջնորդությամբ համայնքում տեղադրվել է Օրանժ Արմենիայի և Վիվասելի անտենաներ , բարելավվել է ինտերնետ կապի ծառայությունն ու որակը :

Համայնքում ամիսի 3 անգամ կատարվում է աղբահանում:

Համայնքի կարևորագույն հիմնախնդիրներն են.

1. կառուցել մսուր-մանկապարտեզի շենք,
2. կուլտուրայի տան շենքի վերանորոգում,
3. գյուղապետարանի շենքի վերանորոգում,
4. ոռոգման ջրի 3.5 կմ ներտնտեսային ցանցի վերակառուցում և մասնակի վերանորոգում:

Շահումյան համայնքի ղեկավար



Հ.Գ.Նավասարդյան